

ԼԵԶՈՒՆ ԵՒ ՈՃԸ

Հերոնիմոս կ'ըսէ. «Ղուկաս... բոլոր աւետարանիչներու մէջէն՝ յունարէն լեզուի ամէնէն հմուտը եղաւ»⁵⁷ :

Արդարեւ, Ղուկաս միւս աւետարանիչներէն աւելի տիրացած է յունարէնի, զոր կը գործածէ, սակայն, անհաւասար գեղեցկութեամբ :

Ընդհանրապէս, իր լեզուն յստակ է, առանց արուեստականութեան, երբեմն վեհաշունչ, բայց ստէպ հասարակ :

Դասական յունարէնը չէ իր գործածած լեզուն, այլ «Koinè» (κοινή), նոյն ժամանակաշրջանի ժողովրդական լեզուն է, որ շատ կը նմանի Աստուածաշունչի Եօթանասնից թարգմանական լեզուին :

Ղուկասի պատմելու ոճը զուսպ է, ժուժկալ, առանց աւելորդաբանութիւններու :

Ղուկաս թափանցող միտք մը եւ նրբութիւն մը ունի, որ կ'առինքնէ ընթերցողը :

Ինչպէս Մատթէոսի եւ Մարկոսի, նոյնպէս նաեւ Ղուկասի մօտ, բայց նախորդ երկուքէն նուազ չափով, զգալի է սեմական լեզուի դրոշմը :

(Շաիր. 6)

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ԺԱԳ ՄԱՐԻԹԷՆ

ՄԱՐԴԿԱՅԵԱՊԱՇՏ ԻՄԱՍՏԱՍԷՐԸ

(1882-1972)

1972 թուականի Ապրիլի 28ին կը վախճանէր Ժագ Մարիթէն :

Կը դադրէր բաբախել մարդկութեան սիրով միշտ տոչորուած սիրտ մը, յաւիտենապէս կը հեռանար մեզմէ միտք մը՝ որ յիսնամեակ մը ամբողջ ճշմարտութեան ախոյեանն էր եղած, կը լռէր ձայն մը մարգարէաշունչ՝ որ անդադար ուղղած էր տատամսոտ քայլեր, քաջալերած՝ խռոված հոգիներ, չէր լռած անարդարութեան ու բռնութեան կամ վատութեան դիմաց, մարտահրաւէրի պէս հնչած էր հորիզոնէ հորիզոն՝ արթնցնելով թմրած հոգիները իրենց անփոյթ թմբիրէն, տալով անոնց նոր գիտակցութիւն, արդի ժամանակները դիմադրաւելու նո՛ր կորով եւ նո՛ր ոյժ :

Իր մահը եղաւ ոչ թէ անհետացումը լոյսի մը, այլ անոր փոխադրութիւնը աւելի յարմար վայր մը, որուն գոյութեան վկայած էր Մարիթէն՝ իր կեանքի ամբողջ ընթացքին :

Ո՞վ էր, սակայն, Մարիթէն :

Անշուշտ յանդուգն ձեռնարկ է մտքի եւ խօսքի այս անդուգական ախոյեանը ներկայացնել ընթերցողներուն. բայց այն մտածումը՝ թէ յաջորդ էջերուն մէջ աւելի Մարիթէնը ինք է որ պիտի խօսի, քաջալերանք է հզօր :

* * *

Ժագ Մարիթէն ծնած է Փարիզ, 1882ի Նոյեմբերի 18ին, բողոքական ծնողներէ : Ծագումով հրեայ էր : Երկրորդական ուսումներէ ետք, 1900ին կը մտնէ Սորպոնի համալսարանը : Հոն կը ճանչնայ Օրիորդ Ռայխսսա Ումանսովը, ծնած 1883ին, Ռոսթով, օրթոդոքս ընտանիքէ, նոյնպէս հրեայ ծագումով :

57. Epist. 19, 4, Ad Damasum. PL. XXII, 378.

Մինչև 1903 թուականը կը տարուբերի նիւթապաշտ տարակոյսներու եւ սկեպտիկութեան միջեւ: Նոյն տարին, սակայն, Ռայիսսայի եւ Էրնեսթ Փրիքարիի (հոչակաւոր Ռենանի թոռան) հետ միասին կը հետեւի, Collège de Franceի մէջ, Պերկսոնի դասախօսութիւններուն՝ Պոլոնի վրայ. ասիկա առիթ կ'ըլլայ իրեն ընդմիջտ թօթափելու նիւթապաշտութեան, յարաբերապաշտութեան եւ սկեպտիկութեան տարակոյսներն ու ցնորքները:

Յաջորդ տարին կ'ամուսնանայ Ռայիսսա Ումանսովի հետ, իսկ 1905ին կ'ըլլայ թեկնածու իմաստասիրական գիտութիւններու:

1906ը Մարիթէնի կեանքին վճռական տարին է: Արդարեւ, յետ երկար տատանումներու, կը դառնայ կաթողիկէ դաւանանքին, իր կնոջ եւ անոր քրոջ՝ Վերա Ումանսովի հետ, ու կը մկրտուի: Նոյն տարին կը մեկնի Գերմանիա, ուր Հայտըպերկի համալսարանին մէջ՝ կը հետեւի կենսաբանութեան: Երկու տարի կը մնայ Գերմանիա:

Վերադարձին՝ բոլորովին կ'անջատուի Պերկսոնէն: Այդ շրջանին իր առաջին հանդիպումը կ'ունենայ Հայր Հիւմպերթ Քլերիսսաքի հետ, որ խորհուրդ կու տայ իրեն կարգաւ եւ սերտել Ս. Թովմաս Ագուինացին:

1910-1939ի շրջանին, Մարիթէն կը դործէ Ֆրանսայի մէջ: Կը դասախօսէ իմաստասիրութիւն, կը հակաճառէ, կը մասնակցի քաղաքական շարժումներու: Այս շրջանի կարեւոր դործերն են. Պերկսոնի իմաստասիրութիւնը (1914), ուր կը նշէ անջատումը իր երբեմնի ուսուցիչէն, եւ իր խոր փարումը նոր ուսուցիչին՝ Ս. Թովմասի: Գեղեցկագիտութեան նուիրումը իր դործն է Արուեստ եւ Սկոլաստիկա (1918), գրուած իր կնոջ գործակցութեամբ. նոյն նիւթին շուրջ ունի տակաւին ուրիշ հատորներ եւ բազմաթիւ յօդուածներ:

1932ին, գիտական հարցերու վերաբերեալ հատոր մը լոյս կ'ընծայէ, Գիտութեան աստիճանները (Les degrés du Savoir) խորագրով, որ նոյն գիծին պատկանող իր մեծագոյն երկն է:

1936ին լոյս կը տեսնէ իր հոչակաւոր «Humanisme intégral»ը: Քրիստոնեայ շրջանակներուն համար զգայացունց նորութիւն էր այս դարադուլի կազմող դործը, որ նոր հորիզոններ կը բանար քրիստոնէութեան համար: Բայց միտքերը տակաւին պատրաստ չէին նման լուսամիտ գաղափարներ ընդունելու. Մարիթէն կանխած էր ժամանակները, եւ հետեւաբար պէտք էր քաւութեան նոխազ ըլլալ: Իրապէս ալ յարձակումները չուշացան: Մարիթէն մակղիր մը շահեցաւ. «մարքսիստ-քրիստոնեայ»:

Պատերազմի նախօրեակին՝ կ'ապաստանի Միացեալ Նահանգներ:

1940-1960 տարիներու ընթացքին Մարիթէն կը դործէ արտասահմանի մէջ: Կը դասախօսէ Ամերիկայի գրեթէ բոլոր նշանաւոր համալսարաններու ամպիոններէն: Պատերազմի տարիներուն՝ տեն-

դագին կը դործէ, ազատատենչ ոյժերու կողքին, ընդդէմ բռնաւոր համայնատիրութեան եւ ցեղապաշտութեան: Զանազան դիւանագիտական պաշտօններ ալ կը վարէ, իբրեւ Ֆրանսայի դեսպան կամ իբրեւ նախագահ Ֆրանսական այլեւայլ պատուիրակութիւններու:

Այս բոլոր դարդումներուն մէջ, սակայն, չի թողուր իր տեսական պրպտումները. լոյս կ'ընծայէ իմաստասիրութեան դասընթացքներ, բարոյական իմաստասիրութիւն, դաստիարակչական երկեր, եւայլն:

1960ին կը մեռնի իր պաշտելի կենակիցը՝ Ռայիսսան, խոր սուգի մատնելով ծերունազարդ իմաստասէրը: Ռայիսսան ոչ միայն եղած էր անփոխարինելի աջակիցը Մարիթէնի շատ մը դործերուն, այլ նաեւ ինքը անձամբ հրատարակած էր բազմաթիւ գիրքեր, մասնաւորապէս բանաստեղծական հաւաքածոներ:

1961ին Մարիթէն կը վերադառնայ Ֆրանսա եւ վերջնականապէս կը հաստատուի Թուլուզ: Կը սկսի իր կեանքի վերջին շրջանը, նըւիրուած առհասարակ խորհրդածութեան եւ բերրի առանձնութեան:

1963ին կը հրատարակէ Ռայիսսայի օրագիրը, որ կը վկայէ անոր ունեցած հոգեկան կեանքի ճոխութեան եւ Մարիթէնի դործին վրայ ըրած ազդեցութեան:

1966ին կը հրատարակէ Կարոնի գիւղացին (Le paysan de la Garonne) այլաբանական երկը, որ առարկայ կ'ըլլայ թիւրիմացութիւններու եւ բանավէճերու:

1970ին լոյս կ'ընծայէ Քրիստոսի Եկեղեցին խորագրով աշխատասիրութիւնը, եւ նոյն տարուան Հոկտեմբերին՝ կ'ընդգրկէ կրօնաւորական վիճակը, 87 տարեկանին:

Դեռ թարմ է Կարոնի գիւղացին շուրջ յարուցուած վէճերուն արձագանգը: Շատեր ըսին՝ թէ ահաւասիկ ծերունի իմաստասէրը վերջապէս կը հակասէ ինքնիրեն: Ոմանց համար եղածը բարիք մըն էր, ուրիշներու համար՝ չարիք մը. ամէն պարագայի, ան որ երբեմն հրահրած էր քրիստոնէութեան յառաջապահ գունդերը, այժմ կարհրահրած էր քրիստոնէութեան յառաջապահ գունդերը, այժմ կարհրահրած էր իբրեւ ռահվիրայ, իբրեւ ժամանակակից քրիստոնէութեան գիտակցութիւնը կազմող մեծղի դերակատարը: Այս տեսակէտով՝ Մարիթէն Վատիկանեան Բ. Տիեզերական ժողովին հողը պատրաստող մշակներէն մէկը եղաւ: Անեկիւղ՝ իր ձայնը բարձրացուցած էր ատենին ազդարարելու քրիստոնեայ աշխարհին, դուրս դալ իր ամուլ կղզիացումէն: Այժմ իր ազդարարութիւնը կ'ուղղէր բոլոր անոնց, որոնք դարուն պահանջներուն ընդառաջ երթալու մտահոգութեան չափազանց տարուած, դիմափոխած էին քրիստոնէութիւնը, զրկելով զայն էական տարրերէ:

Շրեանական թուականներուն, Մարիթէն քար գայթակղութեան եղած էր, երբ կը փորձէր հասկացողութեան մը դալ Մարքսիզմի հետ, եւ կամ վճռականօրէն ձերբադատուիլ դարուն պահանջներուն հանդէպ որդեգրուած հին եւ նախապաշարեալ դիրքաւորումներէն: Նոյնը կը կրկնէր նաեւ այսօր, շեշտելով թէ քրիստոնէութեան միակ ճշմարիտ խօսակիցը մարքսիզմն է. սակայն միշտ դիտել կու տար որ մարքսիզմը քրիստոնէութեան մէկ նոր հերետիկոսութիւնն է, մանաւանդ թէ վերջին հերետիկոսութիւնը:

Իրականութեան մէջ, ինչպէս յայտնի պիտի տեսնուի, հակասութիւն չկայ Մարիթէնի քով: Ուր որ համբերութեամբ եւ աննախապաշար մտքով ուղէ ունենդրել անոր տարբեր պատգամները, խորքին մէջ անպայման պիտի նշմարէ ներդաշնակութիւն մը, բացառիկ հետեւողականութիւն մը, մարդարէական շարունակականութիւն մը: Վերոյիշեալ երկու ազդարարութիւնները հաւասարապէս ներկայ են Մարիթէնի քով՝ ինչպէս երէկ, նոյնպէս եւ այսօր. միայն թէ անոնցմէ մէկը կամ միւսը աւելի շեշտուած է, ըստ ժամանակներու եւ պարագաներու պահանջին:

Շնորհիւ այս անկաշառ հետեւողականութեան, Մարիթէն կը ներկայանայ մեզի իբրեւ մէկը՝ պատմութիւնը կերտող այն անձերէն, որոնց քովէն մարդիկ պիտի չկարենան երբեք անտարբեր անցնիլ:

Ներկայ դրութիւնը, որ միայն ողելոյցով մը կ'ուղէ ըլլալ, նըպատակ չունի սպառիչ ուսումնասիրութիւն մը ներկայացնել Մարիթէնի իմաստասիրութեան շուրջ. նման ձեռնարկ մը շատ հեռուները պիտի տանէր մեզ: Այստեղ պիտի նկատենք միայն իր մարդկայնապաշտ դրութիւնը¹ (Humanisme), այսինքն՝ մարդուն մասին ու-

1. Եւրոպական Humanisme եզրը ունի երկու առում. մին բանասիրական եւ դրական, որ իր նախնական իմաստն է. իբր այդ՝ կը յայտնուի յատկապէս Ժ. Դաւուն, եւ կը ներկայացնէ վերադարձը դէպի յունա-հռոմէական մշակոյթը: Այս շարժումը ծնունդ առած է Իտալիայէն, անկէ տարածուելով յետոյ ամբողջ Եւրոպայի մէջ:

Երկրորդ առումը իմաստասիրականն է, եւ ճիշտ այդ առումով է որ կը դործածենք այստեղ: Այս իմաստով, կը ներկայացնէ մտածումի այն բոլոր դրութիւններն ու հոսանքները, որոնց հետաքրքրութեան զլխաւոր առարկան մարդն է. անոնք կը փառարանեն կամ կը պաշտպանեն մարդը, տէր կանգնելով անոր արժանապատուութեան եւ արժէքներուն: Ժ. Դաւուն վերջաւորութեան է որ առջին անգամ դործածուած է այս առումով: Առանձին դպրոց մը կամ դրութիւն մը ըլլալէ աւելի, որոշ աշխարհահայեացք մըն է, որ կրնայ դոյրութիւն ունենալ իմաստասիրական տարբեր դրութեան հետեւող մարդոց քով: Հետեւաբար, տարբեր humanismներ կրնան գոյութիւն ունենալ, նկատած թէ ո'ր մէկ իմաստասիրական դրութեան ցողացումներն են, կամ թէ ինչ կ'ըմբռնեն «մարդկային արժանապատուութիւն կամ արժէքներ» ըսելով:

Humanisme-ի այս երկրորդ առումը արտայայտող իբրեւ հայերէն եզր կը դործածենք մարդկայնապաշտութիւն կամ մարդկայնապաշտ դրութիւն, իսկ hu-

նեցած իր ըմբռնումն ու տեսութիւնները, որոնք հիմն ու մեկնակէտն են իր իմաստասիրական ամբողջ կառոյցին:

Բուն նիւթին անցնելէ առաջ, հարկ է կարեւոր կէտ մը նշել. Մարիթէնի մտածութեան մէջ «խորհուրդ» մը կայ, որ միեւնոյն ատեն իր դործին «գաղտնիքն» է. արդի իմաստասիրական հոսանքներու մասին տուած իր խոր եւ հմուտ դատաստանները, արդի դարու հոգեկան ամէնէն աւելի անմիջական պահանջներուն շուրջ կատարած իր խոր հետազոտութիւնները, իբրեւ մեկնակէտ ունին իր փարումն ու բացարձակ վստահութիւնը քրիստոնէայ մտածութեան այն յատուկ հոսանքին, որ կը կոչուի քովալայանութիւն: Արդարեւ, Միջին Դարու այդ մտքի տիտանը, Ս. Թոմաս Ագուինացին, եղած է Մարիթէնի ուսումնասիրութեան եւ սքանչացումին առարկան. վկայ՝ 1930ին հրատարակած իր «Հրեշտակային վարդապետը» խորագրով սքանչելի երկասիրութիւնը: Կրնանք ըսել որ յիսուն տարիներու ընթացքին՝ անխոնջ տքնութեամբ հեղինակած իր անհամար գործերը, թերծուած են Մեծ Ագուինացիի մտածութեան մէջ:

* * *

Ի՞նչ է մարդը՝ Մարիթէնի համաձայն:

Հարցում մը, որուն դիմաց մարդկութիւնը դարերով տարուբերած է եւ կը շարունակէ տարուբերիլ՝ իրարմէ տարբեր եւ յաճախ իրարու հակառակ պատասխաններու միջեւ: Իւրաքանչիւր քաղաքակրթութիւն ունեցած է իր յատուկ ըմբռնումը մարդու մասին. ըմբռնում մը՝ որ միացած մարդուս խառնուածքին հետ, պայմանաւորած է անոր ամբողջ գործունէութիւնն ու ապրելակերպը: Այդպիսի ըմբռնում մը իր ամբողջութեան մէջ կը յայտնուի միայն սակաւթիւ մտածող-առաջնորդներու քով, մինչդեռ ժողովուրդին ընդարձակ խաւերը, շատ անգամ, միայն տարտամ դադափար մը ունին անոր մասին, բայց միշտ իւրացուցած կ'ըլլան զայն այնքան՝ որքան որ անհրաժեշտ է դարաշրջանի մը քաղաքակրթութեան ներդաշնակութիւն եւ միութիւն տալու համար: Եւ ամէն անգամ որ ու-

manisteին դիմաց կը դնենք մարդկայնապաշտ իմաստասէր: Նախնորութիւն տուինք այս բառերուն, նկատի առնելով որ նախ՝ այդպէս isme եւ istehու համապատասխան հայերէն եզրաբանութիւնը աւելի միաձեւ կ'ըլլայ. երկրորդ՝ որովհետեւ պաշտ մասնիկը աւելի կը յարմարի humanismeին, քան թէ réalismeին, idéalismeին, եւլն. արդարեւ, humanisme արժէքներու կը վերաբերի, եւ մարդ արժէքներուն հանդէպ պաշտում մը կրնայ ունենալ. մինչ բանապաշտութիւնը, իրապաշտութիւնը, եւլն., վերացական դրութիւններ են, որոնց հանդէպ պաշտումը աւելի դժուարաւ կ'ըմբռնուի: Բայց ատոնք այլեւս ընդհանրացած եւ ընդունուած եզրերն են:

ղենք դարու մը կամ քաղաքակրթութեան մը մասին գաղափար կադմել, կը բաւէ որ ուղղենք անոր այս հարցումը. ի՞նչ է մարդը... ասոր տրուած պատասխանը անսայթաքօրէն պիտի ուղղէ մեզ մեր հետազոտութեան մէջ:

Մարիթէն՝ ի՞նքն ալ, ուղղած է այս հարցումը իր դարուն. բայց ստացած մասնական եւ խեղաթիւրուած պատասխաններէն յուսախաբ, ուզած է անձամբ փնտռել եւ վերակազմել «ամբողջական մարդ»ը: Ան համոզուած կ'եղրակացնէ որ միայն Աւետարանն ու քրիստոնէութիւնը կրնան երաշխաւորել նման ձեռնարկի մը յաջողութիւնը:

Այս ուղղութեամբ, իր հիմնական գործն է Humanisme Intégralը (Ամբողջական կամ կատարեալ մարդկայնապաշտութիւն), որուն մասին անդրադարձանք արդէն, լոյս տեսած 1936ին: Աւելի ուշ՝ նոյն նիւթին շուրջ կարեւոր յօդուած մը գրած է 1942ին, «Ի՞նչ է մարդը» վերնագրով²: Humanisme Intégralի կուռ համառոտութիւնն է, որ մարդու մասին արդի պատմութիւնը յատկանշող տարբեր ըմբռնումները թուելէ ետք, կը մատնանչէ մարդու նոր կերպար մը, ամբողջական մարդը եւ կամ քրիստոնեայ մարդը: Այդ յօդուածը իբրեւ առաջնորդ ծառայած է ներկայ գրութեան այս մասին: Մէջբերումները իտալերէն թարգմանութենէն են³:

Այստեղ հարկ է նշել որ Մարիթէն, իր հետազոտութեան ընթացքին, բնականօրէն նկատի առած է առհասարակ արեւմտեան քաղաքակրթութիւնն ու պատմութիւնը: Իր տեսութիւնները կը հիմնէ Արեւմուտքի մէջ տեղի ունեցած յեղաշրջումներուն վրայ: Բայց, անտարակոյս, իր եղրակացութիւնները հաւասար արժէք ունին նաեւ ուրիշ երկիրներու համար, որովհետեւ Արեւմուտքը իր պատմութեամբ եւ մշակոյթով պայմանաւորած է եւ կը շարունակէ պայմանաւորել աշխարհի գրեթէ բոլոր միւս մասերուն քաղաքակրթութիւնները: Միւս կողմէ, Մարիթէնի տեսակէտները իրենց եղրակացութիւններուն մէջ համամարդկային հանգամանք ունին, քանի որ իրենց աւելը կը ստանան քրիստոնէութենէն:

Յետադարձ ակնարկ մը՝ վերջին երկհազարամեակի պատմութեան վրայ, հետեւեալ պատկերը պիտի պարզէ մեր առջեւ: Մարդու մասին տիրող միջնադարեան քրիստոնեայ քաղաքակրթութիւնը յատկանշող աշխարհահայեացքն ու ըմբռնումները մեծ մասով առաջ կու գային Ս. Պօղոսէն եւ Ս. Օգոստինոսէն: Մակայն, ԺԵ. դարու եւրոպական Վերածնունդն ու անոր յաջորդող եկեղեցական մեծղի հեր-

2. Լոյս տեսած անգլիերէն լեզուով «Fortune» ամսագրին մէջ, 1942ի Ապրիլին: Աւելի ուշ, ամփոփուած՝ շարք մը ուրիշ յօդուածներու եւ ճառերու հետ Pour la justice հատորին մէջ, éd. de La Maison Française, New York, 1945:
3. Տե՛ս «Vita e Pensiero» ամսագիր, Յուն.-Փետր., 1973, էջ XIV-XXIV:

ձուածը, ծանօթ՝ Բարեկարգութիւն (Réforme) անունով, ուժգին հարուած մը տուին անցեալի այդ ճոխ ժառանգութեան: Քրիստոնէութիւնը երկու հատուածներու բաժնուեցաւ. մէկ կողմէն ծայրայեղ յոռետեսները, որոնք յուսահատած էին մարդէն, չափազանց շեշտելով անոր մէջ անկեալ բնութիւնը, եւ հետեւաբար ամէն բան Աստուծոյ շնորհքէն կը սպասէին. միւս կողմէն ծայրայեղ լաւատեսները, որոնք աւելի արժէք կու տային մարդուն ձիրքերուն եւ կարողութիւններուն՝ քան թէ Աստուծոյ շնորհքին:

Այս մարդին մէջ, արդի դարու վարժապետները եղան Տէքարթ, Ճոն Լոք, Ժան Ժազ Ռուսոյ: Անոնց նկարագրած մարդը՝ բանապաշտ եւ աշխարհականացած մարդն էր, որ բնականէն վեր ոչինչ կ'ուզէր ճանչնալ: Անոր կրօնքը բնական կրօնքն էր, հիմնուած մարդուս բնական բարութեան վրայ: Այսպէս՝ մարդուս բնութիւնը հրեշտակային հանգամանք զգեցած էր: Ան այլեւս պէտք չունէր գերբնական ճշմարտութիւններու, պէտք չունէր շնորհքին, հրաշքին, յայտնութեան. մարդը աստուածացած էր...: Մարդակեդրոն մարդկայնապաշտութիւնը իր արքայութիւնը կը կերտէր, մեծամեծ խոստումներ շուայելով աջ ու ձախ:

Միւս կողմէ հսկայաքայլ յառաջացող գիտութիւնը, լուսաւոր հեռանկարներ կը պարզէր գիտովցած մարդկութեան առջեւ. գիտութիւնը ոչ միայն պիտի ձեռքադատէր մարդը խաւարի ճիրաններէն՝ ընելով զայն իրաւարարն ու տէրը ամբողջ բնութեան, այլ նաեւ իր ինքնամուղ եւ անհրաժեշտ զարգացումով, պիտի առաջնորդէր մարդը դէպի խաղաղութեան երկրաւոր արքայութիւնը, դէպի այն օրհնեալ երուսաղէմը, զոր մարդիկ իրենց ձեռքերով պիտի կառուցանէին, եւ որ պիտի ըլլար մարդուն թագաւորութիւնը. հոն՝ մարդիկ կերտողները պիտի ըլլային պատմութեան: Այս շացուցիչ հեռանկարն է որ ամրապնդած է յոյսն ու հաւատքը արդի մեծ յեղափոխականներուն:

Այսպէս, արդի գաղափարախօսութիւններու խառնարանին մէջ հետզհետէ նսեմացան այն բոլոր ճշմարտութիւնները, որոնք բղխած էին բնագանցութենէն եւ կամ հաւատքէն, եւ որոնք հիմնաւորած էին մարդուն կերպարը քրիստոնէութեան մէջ:

Մէկ խօսքով մարդկային բանականութիւնը՝ խզելով իր յարաբերութիւնը գերադոյն էակին հետ, կը բաւականանար լոկ արտաքին զգայական եւ նիւթական երեւոյթներու հետազոտութեամբ, անտեսելով որեւէ բացարձակ իրականութիւն, որեւէ բացարձակ ճշմարտութիւն կամ արժէք:

Այստեղ խօսքը տանք Մարիթէնին, որ քանդակիչ կերպով պատկերացուցած է մարդուն հոգեվիճակը. «Արդի մարդը կը ճանչնար քանի մը ճշմարտութիւններ, առանց ճանչնալու ճշմարտութիւնը. կրնար խորանալ գիտութեան յարաբերական եւ փոփոխական ճշմար-

տուրբիւններուն մէջ, բայց անոր կը զգար ինքզինքը եւ զարհուրած էր որեւէ անփոփոխ ճշմարտութեան առջեւ՝ ձեռք բերուած մարդկային մտքի բնազանցական ճիշդով, ինչպէս նաեւ աստուածային ձըշմարտութեան առջեւ՝ յայտնուած Բանէն։ Արդի մարդը կը հռչակէր մարդէ Զակին իրաւունքներն ու արժանապատուութիւնը, բայց առանց Աստուծոյ, որովհետեւ իր դադափարարանութիւնը կ'երաշխաւորէր այդ իրաւունքներն ու արժանապատուութիւնը՝ հիմնուելով լոկ մարդկային կամքի աստուածային եւ անսահման ազատութեան վրայ, զոր դուրսէն պարտադրուած որեւէ օրէնք կամ սահմանաւորում պիտի խոցէր եւ ոչնչացնէր։ Արդի մարդը կը հաւատար խաղաղութեան եւ եղբայրութեան, բայց առանց Գրիստոսի, որովհետեւ ուզելով առանձին փրկուիլ, պէտք չունէր Փրկիչի մը, եւ մարդկութեան հանդէպ սէրը պէտք չունէր աստուածային սիրոյն՝ իբրեւ ակի։ Արդի մարդը յարատեւօրէն կը դիմէր դէպի բարին եւ դէպի տիրապետումը երկրին, բայց հարկ չէր տեսներ չարը դիմադրաւելու երկրիս վրայ, որովհետեւ չէր հաւատար չարին գոյութեան. (մարդուն համար) չարը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ յեղաշրջումի մէկ անկատար հանգրուանը, որ բնականօրէն եւ անհրաժեշտօրէն տեղի պիտի տար յաջորդ հանգրուանին։ Արդի մարդը կը վայելէր կեանքը եւ կը պաշտէր զայն իբրեւ անսահման արժէք մը, բայց չունէր հոգի, չունէր նուիրուելու կարելիութիւն, որովհետեւ (իրեն համար) հոգին ոչ գիտական գաղափար մըն էր, ժառանգուած նախնական մարդոց երազներէն։ Բայց մարդ իր հոգիէն զատ ի՞նչ կրնայ նուիրել անոր՝ զոր կը սիրէ. դրամը գուցէ, բայց ո՛չ ինքզինքը»։

«Ինչ կը վերաբերի քաղաքակրթութեան, արդի մարդը կ'ապրէր ընկերային եւ քաղաքական կեանք մը, հասարակաց կեանք մը, բայց առանց հասարակաց բարիքներու եւ ձեռնարկներու, որովհետեւ այդ կենսակցութեան նպատակը կը կայանար լոկ նեցուկ կանգնելու անհատին ազատութեան, որպէսզի ուղածին պէս տրամադրէր սեփական ստացուածքը, դիզէր հարստութիւններ եւ հետամուտ ըլլար իր անձնական հանգիստին»։ Մէկօրեւ զարդի մարդը երջանկութիւնը կը փնտռէր, բայց առանց վերջնական նպատակ մը հետապնդելու եւ կամ բանաւոր գաղափարականի մը փարելու... Այսպէս, երջանկութիւնը մնացած է ձգտում մը դէպի երջանկութիւն, բայց ձգտում մը առանց նպատակի, այլ միշտ աւելի ստորաքարչ եւ լծացած»⁴։

ԺԶ. դարուն սկսող այս յեղաշրջումը ներկայիս առած է ահեղ տագնապի (crise) մը հանգամանքները։ Հակառակ ամէն տեսակ խեղաթիւրումներուն, սակայն, մեր քաղաքակրթութիւնը խորքին մէջ տակաւին կը պահէ սրբազան աւանդը աստուածային եւ մարդկային

4. Տե՛ս անդ, էջ XVI-XVII:

այն արժէքներուն, որոնք մեզի կու գան հին դարերու ազատութեան համար մղուած պայքարներէն, հրէա-քրիստոնէական աւանդութենէն եւ հին դասական աշխարհէն. աւանդ մը, որ մեծապէս կորսնցուցած է իր նախկին զօրութիւնը, բայց միշտ ի վիճակի է նոր ծիլեր արձակելու իր պահեստի ոյժերէն։

Պէտք չենք մոռնալ, սակայն, որ հիւանդութիւնը ցեցի պէս կը կրծէ մեր հոգիները։ Միւս կողմէ, յեղափոխական մեծ հոսանքները հիւանդութիւնը իր վերջին սաստկութեան հասցուցին։ Անոնք ջանացին ամէն կերպով խզել կապը քրիստոնէական արժէքներուն հետ։ Թուենք մէկ քանին.

Մարքսիզմը, որուն հիմնական նշանաբանն է՝ թէ մարդս կը փրկուի առանձին, լոկ իր անձնական ոյժերուն վրայ յեցած։ Արդ՝ եթէ ասիկա ճիշտ է, այդ պարագային փրկութիւնը զուտ ժամանակաւոր է եւ կ'իրականանայ առանց Աստուծոյ, մանաւանդ թէ ընդդէմ Աստուծոյ, ընդդէմ այն ամէն ինչի՝ որ մարդուս եւ աշխարհի մէջ Աստուծոյ դերով կը կրէ։ Նման դրութեան մը մէջ՝ ինչի՞ կը վերածուի մարդուս կերպարը։

Անշուշտ, ան այլեւս Աստուծոյ արարածն ու պատկերը չէ, չունի անձնականութիւն, ընտրելու կարելիութիւն, զուրկ է իրաւունքներէ, ազատութենէ, սահմանուած չէ յաւիտենականութեան, այլ ընկերութեան աննշան մէկ բջիջն է լոկ, որ անձնական գիտակցութիւն ունենալու իրաւունքէն զուրկ՝ կը մասնակցի հասարակաց գիտակցութեան։ Անոր հաւատարմութիւնն ու ազատութիւնը կը կայանան տնտեսական եւ ճարտարարուեստական հաւաքականութեան ծառայելու մէջ։ Մէկ խօսքով՝ մարդկային անձը զոհուած է ճարտարարուեստի աստուածին։

Հոգեվերլուծութիւնը (psychanalyse) բոլորովին տարբեր հոսանքի պատկանող՝ կը ներկայանայ իբրեւ ուժգին հակադեցութիւն մը ամէն տեսակ բանապաշտութեան եւ մարդկայնապաշտութեան դէմ։ Իր արմատները յոռետեսութեան մէջ մխրճած է. կը ձգտի առանցքներու մարդուն կերպարը, կարծէք դոհացնելու համար իր մէջ ամբարած զայրոյթը՝ ընդդէմ մարդկային բանականութեան եւ արժանապատուութեան։

Ըստ այս ըմբռնումին, մարդկութիւնը պատահամբ բուսած ճիւղ մըն է՝ կապիկներու ցեղաբանական ծառին վրայ։ Հետեւաբար, մարդուն յայտնաբերած բանաւոր եւ ազատ գործելակերպերը խաբէական երեւոյթներ են լոկ, պայմանաւորուած անգիտակցութենէն եւ բնադրէն։ Բոլոր մեր զգացումներն ու գործերը, որոնք արտաքսապէս հոգեկանութեան կնիքը կը կրեն, իրականութեան մէջ ուրիշ բան չեն՝ եթէ ոչ զգայական ու սեռային զօրութիւններու արդիւնք, ուստի՝ զուտ բնախօսական ու ֆիզիքական նկարագիր ունին։

Այսպէս, դիմադրեցողութեան մարդուն ետեւ՝ կը յայտնուի անասունին պատկերը: Յետ մերժելու Աստուածը՝ նկատելով ինքզինքը ինքնաբաւ, մարդս կը կորսնցնէ նաեւ հոգին: Ան ի դուր կը փնտռէ ինքզինքը. տակնուվրայ կ'ընէ աշխարհը, բայց միայն դիմականեր կը դըտնէ, որոնց ետեւ ծուարած է մահը:

Ան-բանապաշտութիւնը (Irrationalisme) արդիւնք է վերոյիշեալ բարոյական քայքայումին, եւ իբրեւ յատկանիշ ունի սաստիկ ատելութիւն մը ընդդէմ մարդկային իմացականութեան:

Այս հոսանքին գլխաւոր ներկայացուցիչն է Նիցչէն, որ յաղթահարելու համար անխուսափելի յուսահատութիւնը, հռչակեց Գերմարդու ժամանումը, գովքը հիւսեց տիրապետող կամքին, աղաղակեց թէ մեռած է ճշմարտութիւնը, մեռած է Աստուած: Գերմարդուն երկրպագու հոյլերը բիրտ յոռետեսութիւն մը կը դաւանին. անոնք կը մերժեն անցեալի «ցնորամիտ» բարոյականութիւնը, կ'ուրանան նուիրական արժէքներ, ինչպէս՝ ազատութիւնը, արժանապատւութեան զգացումը, արդարութիւնը, խաղաղութիւնը, բարութիւնը, որոնք՝ ըստ իրենց՝ «ապերջանկութեան» գիրկը նետած էին զիրենք: Ընդհակառակն՝ խօսքար կը յանձնուին չարի եւ մահուան անսահման խոստումներուն, կը նախընտրեն բնազդներու «երջանիկ» գերութիւնը, կ'երգեն փառքն ու յաղթանակը դժխեմ արքայութեան մը մռայլ ոյժերուն:

Տեղապաշտութիւնը (Racisme) որ վերոյիշեալ ուղղութեան ամէնէն աւելի ցայտուն ներկայացուցիչն է: Ան չի հիմնուիր մոլեռանդ բանականութեան վրայ, որ կը մերժէ որեւէ գերանցական (transcendent) արժէք, այլ աստուածային յատկութիւններ զգեցած բնազդին վրայ՝ որ ատելով կը մերժէ բանականութիւնը:

«Անոր սատանայական պաշտամունքները, կը դրէ Մարիթէն, անաստուածութենէն աւելի անդամանելի են, որովհետեւ ան կը փորձէ եղծել Աստուծոյ գաղափարը, վերածելով զայն կուռքի մը: Ան կը դիմէ Աստուծոյ, բաց իբրեւ ժողովուրդի մը կամ պետութեան մը փառքը երաշխաւորող հոգիին, կամ իբրեւ ցեղի մը չատուածին: Արիւնի անյաղթահարելի ոյժին հետ նոյնացած այս չատուածը կ'ընդլի Սինայի եւ Գողգոթայի Աստուծոյն դէմ, սիրոյ Աստուծոյն դէմ...»⁵:

Նման աշխարհահայեացքի մը մէջ՝ մարդուն պատկերը ծանրորէն այլափոխուած է, ընկղմելով ռազմապաշտ յոռետեսութեան մը մէջ: Մարդը մասնիկ մըն է լոկ պետական ամբողջութեան մը, որուն համար չկայ ո՛չ մէկ յոյս, ո՛չ մէկ երջանկութիւն, ո՛չ մէկ ազատու-

թիւն, այլ ունի միայն իշխանութեան ծարաւը, որ կ'իրականանայ բռնութեամբ:

Անտարակոյս, համայնատիրութեան ամէնէն աւելի յոռի ձեւն է, որուն ճաշակը մեղի տուաւ Հիթլերի ցեղապաշտ Գերմանիան:

* * *

Տխուր եւ ամայացած տեսարան մը կը պարզէ մեր առջեւ վերի համայնապատկերը: Եթէ կ'ուզենք մարդկային զարմի վերանորոգումը, պէտք ենք վերակազմել մարդուն ճշմարիտ կերպարը, վերադարձնել անոր իր հարազատ դիմադիծը: Նման ձեռնարկի մը յաջողութեան համար, պէտք ենք, ըստ Մարիթէնի, «վճռական ճիշդ մը դիմել դէպի քրիստոնէական նո՛ր քաղաքակրթութիւն մը, դէպի նո՛ր քրիստոնէութիւն մը: Արդի դարը շատ լաւ բաներ փնտռեց սըլխալ ուղիներու վրայ. մեղի կը մնայ փնտռել զանոնք ուղիղ ճամբաներու երկայնքին»⁶:

Երեսնամեակ մը առաջ հրապարակ նետուած այս նշանաբանը կարծէք դեռ նոր լսելի կ'ըլլայ մարդկութեան, դեռ նոր կը ներշնչէ անոնց այն քաջութիւնն ու յանդգնութիւնը, որո՛վ միայն պիտի կարենանք պարտադրել մենք մեզ վերանորոգել եւ վերանորոգուել ներքսապէս ու արտաքսապէս: Մարիթէն գիտէր դժուարութիւնը այս հսկայ ծրագրին, զոր միայն քաջարի մարդիկ պիտի կարենային իրագործել, եւ կարծէք այդ քաջերուն համար տրուած օրէնքն է իր հետեւեալ խօսքը. «նորոգուելէն խոյս կու տայ փոքրոգին, մինչդեռ քաջարի մարդը կը դիմէ դէպի անյայտը»⁷:

Անյայտը դիմադրաւելը, սակայն, Մարիթէնի համար խաւարին մէջ կուրօրէն նետուիլ մը չէ, այլ անկեղծ ու հաւատարիմ առաջնորդի մը կը կարօտի. այս պարագային՝ այդ առաջնորդը Քրիստոսն է, որուն վառած հաւատքի եւ յոյսի ջահը կ'ուղղէ մեր տատամսոտ քայլերը դէպի լուսաւոր ապագան:

Դիմել քրիստոնէութեան, միւս կողմէ, չի նշանակեր կրկնել անցեալը, մատնուիլ լճացումի: Ո՛չ, երբե՛ք: Կործանարար պիտի ըլլար մեղի համար իյնալ այնպիսի սխալներու մէջ, որոնց զոհ գացին Ժ.Զ. եւ Ժ.Է. դարերու քրիստոնեայ մտածողները: Այսօր մենք ալ, ներկայ քաղաքակրթութեան ծիրին մէջ, կը գտնուինք դրեթէ միեւնոյն հարցերուն դիմաց:

Այն ատեն, յաղթական յառաջացող գիտութիւնը սերտօրէն կա-

5. Անդ, էջ XXI:

6. Անդ, էջ XXIII:

7. Անդ, էջ XXIII:

պուլած էր քրիստոնէական աւանդութեան հակառակ իմաստասիրական դրուժիւններու հետ: Արդ, այդ աւանդութեան պաշտպանները պէտք եղած զանազանութիւնները չկրցան ընել, եւ հետեւաբար դիրք բռնեցին թէ՛ այն ամէն բանին դէմ՝ որ յետագային արդի գիտութիւնը պիտի կազմէր, եւ թէ՛ իմաստասիրական այն դրուժիւններուն դէմ՝ որոնք սկիզբը խաթարեցին նորածագ գիտութեան դիմադիծը:

Երեք դարեր պէտք եղան այդ թիւրիմացութենէն դուրս գալու համար: Ներկայիս, մենք տարբեր դատանիներով կը մօտենանք երկրաւոր իրականութիւններուն. այսօր՝ քրիստոնէական ըմբռնումով նոր եւ ճշմարիտ մարդկայնապաշտութիւն մը՝ չի կրնար անտեսել ինչ որ անցեալ դարը աւանդած է մեզի իբրեւ վաւերական արժէք, չի կրնար արհամարհել մարդկութեան ձեռք բերած նուաճումները:

Ի՞նչ նկարագիր պիտի ունենան քրիստոնէական կամ ամբողջական մարդկայնապաշտութիւնն ու քաղաքակրթութիւնը: Մարիթէնի համաձայն, քրիստոնէական նոր քաղաքակրթութիւն մը պէտք է խորապէս տարբերի միջնադարեան քաղաքակրթութենէն, հակառակ անոր՝ որ երկուքն ալ իբրեւ հիմ ունին քրիստոնէութիւնը: Արդարեւ, միջին դարու եւ արդի չրջանի պատմական մթնոլորտները բոլորովին տարբեր են իրարմէ: Միջնադարեան քաղաքակրթութիւնը կը ներկայանար իբրեւ «սրբազան» քրիստոնէական քաղաքակրթութիւն մը, ուր ժամանակաւոր իրականութիւնները, իմաստասիրութիւնը, գիտութիւնն ու պետութիւնը մատակարարական կազմածներ կամ գործիքներ էին՝ ի սպաս հոգեւոր իրերու, կրօնական հաւատալիքներու, Եկեղեցւոյ: Յաջորդող դարերուն, անոնք յաջողեցան ձեռք ձգել իրենց արդար անկախութիւնը: Բնական յառաջխաղացում մըն էր որ տեղի ունեցաւ: Դժբախտաբար, սակայն, այդ բնական զարգացումը՝ փոխանակ զանազանելու իրարմէ տարբեր իրականութիւնները՝ ի խնդիր լաւագոյն միութեան մը, անջատեց ու մերժեց, հետզհետէ ընդմիջտ հեռացնելով երկրաւոր արժէքները՝ Աւետարանի ճշմարտութենէն:

Քրիստոնէական նոր դարաշրջանը պիտի հաշտեցնէ իրարու ինչ որ բաժնուած էր անցեալին մէջ, պիտի ըլլայ «աշխարհիկ» քրիստոնէական քաղաքակրթութիւն մը, ուր ժամանակաւոր իրականութիւնները պիտի ունենան իրենց լիուրի անկախութիւնը, բայց պիտի ճանչնան եւ ընդունին կենդանարար ու ներշնչող այն դերը, զոր գերագոյն մակարդակի վրայ կը խաղան հոգեկան իրականութիւնները, կրօնական հաւատքն ու եկեղեցին:

«... Մարդակեդրոն մարդկայնապաշտութեան մեծ հիասթափութենէն եւ մեր օրերու անմարդկային մարդկայնապաշտութեան տա-

ռապակոծ փորձառութենէն ետք⁸, աշխարհս պէտք ունի նոր մարդկայնապաշտութեան մը, ամբողջական կամ աստուածակեդրոն, որ նկատէ մարդը իր բնական մեծութեան եւ թշուառութեան մէջ, իջնելով անոր խոցուած էութեան խորը՝ ուր Աստուած կը բնակի...»⁹:

Նման մարդկայնապաշտութիւն մը պիտի ջնջէ այն ապօրինի երկուութիւնը, զոր արդի դարը ստեղծած է՝ բաժնելով աստուածային իրականութիւնները երկրաւոր իրականութիւններէն: Այդ երկուութեան բարձումով՝ մարդկութիւնը պիտի գտնէ իր կորսնցուցած հաւասարակշռութիւնը, ու պիտի հարթուի սիրոյ ճամբան. այո՛, սիրով միայն կարելի պիտի ըլլայ իրագործել ընկերութեան ճշմարիտ վերանորոգումը:

* * *

Ո՞րն է այս նոր քաղաքակրթութեան հետ կապուած մարդուն կերպարը:

Այստեղ կու տանք մարդկայնապաշտ Մարիթէնի հաւատքը: Ամբողջական մարդկայնապաշտութեան մարդը՝ հոգիէ եւ նիւթէ կազմուած էակն է. ընդունելով հանդերձ թէ անոր մարմինը առաջ եկած է կենդանական աշխարհի պատմական յեղաշրջումէն, անոր հոգին, սակայն, անմահ է եւ ստեղծուած ուղղակի Աստուծմէ:

Մարդս եղած է ճշմարտութեան համար: Ան կրնայ Աստուծոյ հասնիլ երկու տարբեր ուղիներով. նախ՝ իր բանականութեան ճամբով կրնայ ճանչնալ զինքը իբրեւ առաջին պատճառը գոյութեան. երկրորդ՝ հաւատքի լոյսէն առաջնորդուած, կարող է թափանցել անոր կեանքի ներքին ծալքերուն մէջ:

Մարդուս մեծագոյն արժանապատուութիւնը՝ Աստուծոյ պատկերն ըլլալն է:

Վիրաւորուած՝ մեղքէն եւ մահէն, մարդս վերանորոգուած է Քրիստոսէ, որ կը հաշտեցնէ զինքը Աստուծոյ հետ, հաղորդակից կ'ընէ զինքը Անոր կեանքին, մասնակից կ'ընէ՝ սիրոյ եւ տառապանքի ճամբով՝ փրկագործութեան:

Մարդս՝ որ ի բնէ կոչուած է կիրարկելու պատմութեան մէջ իր հոգեկան զօրութիւնները եւ ամրապնդելու աստիճանաբար իր բանականութեան տիրապետութիւնը՝ իր բնազդներու եւ նիւթական տիեզերքին վրայ, երկրիս վրայ իր յառաջդիմութիւնը կ'իրագործէ ո՛չ թէ ինքնաբերաբար կամ զուտ բնական մղումով, այլ ազատ ընտրութեամբ եւ Աստուծոյ ներքին օգնութեամբ: Հակառակ ասոր, սա-

8. Կ'ակնարկէ Հիթլէրեան վարչաձեւին:

9. Անդ, էջ XXIV:

կայն, կայ ընդդիմութիւնը չարի ոյժին, որ հակամէտ է ներմուծելու ոչնչութիւնը արարչութեան մէջ, եւ անարդելու պատմութիւնը: Բայց բանականութեան եւ սիրոյ ստեղծագործ զօրութիւնները կը վերընծիւղին անդադար եւ միշտ աւելի կենսալիւ՝ վերակենդանացնելու համար այդ նուաստացած պատմութիւնը:

Կատարեալ մարդկայնապաշտը գիտէ՝ թէ այս աշխարհի վրայ ամէն բան ժամանակաւոր է եւ վաղանցուկ: Որքան որ բնականօրէն սրբազան հանգամանք մը ունի իր անցաւոր կեանքը, սակայն կան շատ աւելի վսեմ եւ թանկագին իրականութիւններ: Մարդս իր կեանքը կը զոհէ ընկերոջ սիրոյն եւ կամ հայրենիքին համար: Յաճախ խօսք մը միայն աւելի արժէք կը ստանայ՝ քան մարդկային կեանքը, եթէ զայն կ'արձակենք բռնակալին երեսն ի վեր՝ յանուն ազատութեան կամ ճշմարտութեան:

Մահը, սակայն, որքան որ անխուսափելի իրականութիւն մըն է երկրիս վրայ, վերջակէտ մը չէ մարդուն համար, այլ վերադարձում մըն է, սկիզբն է նոր եւ յաւիտենական կեանքի մը, որ պիտի աստուածացնէ մեզ, մասնակից ընելով Աստուծոյ կեանքին եւ Անոր դէմ-յանդիման տեսութեան:

Ու մարդս՝ գիտակից այս ճշմարտութեան, չի տատամսիր ինքզինքը ձօնելու այժմէն իսկ. որովհետեւ իւրաքանչիւր ձօն՝ նոր փայլ մը կ'աւելցնէ իր կեանքին վրայ:

Քրիստոնեայ մարդկայնապաշտը կը ձգտի բարեփոխել մարդկային կեանքը, հնարաւորութիւն տալով իւրաքանչիւրին՝ ապրելու ազատ եւ վայելելու հոգեկան ու մշակութային բարիքները: Ան կ'ընդունի որ հեղինակութիւնը անոնց, որոնք հասարակաց բարիքները կը մատակարարեն եւ ընտրուած են ժողովուրդէն, կը բղխի բնութեան Արարիչէն. համոզուած է թէ այդ հեղինակութիւնը կրնայ պարտադրել մեր խիղճը, պայմանով որ արդարութեան վրայ հիմնուած ըլլայ:

Ան կը սիրէ ազատութիւնը, կը ճանչնայ էական հաւասարութիւն մը մարդկութեան միջեւ՝ հիմնուած փոխադարձ յարգանքի եւ եղբայրութեան վրայ: Արդարութիւնը իրեն համար անհրաժեշտ պայմանն է խաղաղութեան եւ բարեկամութեան: Միւս կողմէ, մեքենային տիրապետութիւնը՝ ներկայ ընկերութեան մէջ՝ անտարբեր չի ձգեր զինքը. ան գիտէ թէ մեքենան սքանչելի միջոց մը կրնայ ըլլալ մարդու ազատագործին համար, եթէ կործանարար եւ հեղձուցիչ բնազդներ չօգտագործեն գիտութիւնն ու գիտարուեստը (technique) ստրկացնելու համար մարդը, ծառայեցնելով զանոնք անմարդկային նպատակներու:

Կեանքը իմաստ մը ունի իրեն համար. կոյր եւ պատահական ոյժերու խաղը չէ: Երկու իրար լրացնող ձգտումներ կը բնորոշեն իր

հոգեկան ներաշխարհը. մին՝ ուղղահայեաց, որ մարդս կը մղէ դէպի իր կեանքի վերջին նպատակը, այսինքն՝ Աստուած: Անոր հասնելու համար, մարդ պէտք է կատարելագործէ ինքզինքը՝ իր երկրաւոր դոյութեան ընթացքին, ճոխացնելով իր հոգեկան կարողութիւնները: Այդ կատարելագործումը, սակայն, չի նմանիր ստոյիկեան հրահանգումներուն, որոնցմով անոնք կը փորձէին խուսափիլ բարոյական սայթաքումէն. այլ սիրոյ կատարելագործումն է, սէր՝ հանդէպ Աստուծոյ, զոր կը սիրէ իր անձէն իսկ աւելի, որուն կը տենչայ միանալ, հոգ չէ թէ ետեւէն քարշ տալով իր անկատարութիւններուն եւ տկարութիւններուն պարկը: Աւետարանական կատարելութիւնն է ասիկա, ձեռք բերուած մեծ ճիգերով, եւ վերջին հաշիւով՝ շնորհուած մեղի Աստուծմէ:

Միւս ձգտումը՝ հորիզոնականն է, եւ կը վերաբերի մարդկութեան յեղաշրջումին, յայտնաբերելով աստիճանաբար մարդուն ըստեղծագործ ոյժերը՝ պատմութեան մէջ: Քաղաքակրթութեան այս հորիզոնական ընթացքը, երբ ուղղուած է ժամանակաւոր՝ բայց հաւաքատ նպատակներու, մեծապէս կը նպաստէ զօրացնելու ուղղահայեաց ձգտումը հոգիներու մէջ, առանց որուն՝ քաղաքակրթութիւնը կը կորսնցնէ իր հոգեկան տարրերը, կը զրկուի մարդկային կորովէն եւ ստեղծագործ ներշնչումէն, որոնք զինքը կը մղէին կերտելու ժամանակաւոր աշխարհը:

Պատմութիւնը, նոյնպէս, իմաստ մը եւ նպատակ մը ունի նոր մարդուն համար: Գերադոյն գաղափարականը, որուն պէտք է ձգտի մարդկութեան ընկերային եւ քաղաքական գործունէութիւնը՝ է կերտել եղբայրական հասարակութիւն մը: Ասիկա, սակայն, չի նշանակեր որ օր մը բոլոր մարդիկ կատարեալ պիտի ըլլան երկրիս վրայ եւ իրար պիտի սիրեն եղբայրաբար, այլ մեղի կը ներշնչէ յոյսը՝ որ մարդկային կեանքն ու քաղաքակրթութիւնը միշտ աւելի պիտի մօտենան կատարելութեան, որուն չափանիշերն են արդարութիւնն ու բարեկամութիւնը: Ասիկա է նաեւ գաղափարականը նոր եւ հարազատ ժողովրդավարութեան (démocratie), որուն ամբողջական իրականացումին համար կը գործեն մարդկութեան գիտակից եւ յառաջդէմ ոյժերը¹⁰:

* * *

Ինչպէս, անշուշտ նկատեցին մեր ընթերցողները, մօտենալ Մարիթէնի պէս հսկայի մը, առաջին առիթով չփոթութեան կը մատնէ մեզ. անոր համապարփակ եւ խորաթափանց միտքը ընդգրկած է գի-

10. Անդ, էջ XXIV-XXIX:

տուրքերն զրեթէ բոլոր կալուածները, պեղած է մարդկային հողին իր ամէնէն աւելի անմատչելի ծալքերուն մէջ: Մարիթէնը ամբողջապէս ճանչնալու համար՝ պէտք է նկատել իր մէջ նաեւ բնազանցազէտը, գեղազէտ-քննադատը, դաստիարակը, քաղաքական գործիչը: Այստեղ նկատի առնուած էր միայն անոր մարդկայնապաշտութիւնը. բայց ասիկա ըլլալով զլիսաւոր առանցքը անոր ամբողջ իմաստասիրութեան, կարող է տալ մեղի յատակ ուրուագիծը անոր բազմակողմանի տաղանդին:

Դժուար է բաժնուիլ իրմէ, անգամ մը որ ծանօթացած ես այլեւս: Շուտով կը մտերմանաս իրեն, եւ առաջին վայրկեանի շփոթութիւնը՝ տեղի կու տայ սիրոյ եւ անխառն պաշտամունքի: Զարմանալի ձգողութիւն մը ունի անոր անձը, որ կ'առինքնէ, կը խանդավառէ, կը ներշնչէ: Իր կեանքը ամբողջ ներշնչարան եւ փարոս եղաւ տուայտող հողիներու, որոնք վարանումի մատնուած էին մեր դարու որոգայթալի ծանծաղուտներուն մէջ: Քանին՝ իրեն կը պարտին իրենց հաւատքը, իրենց կեանքը:

Մարիթէն խոր բացաւ իր ակօսը պատմութեան անդաստանին մէջէն, ուղիղ դէպի Աղբիւրը Լոյսին, դէպի սկիզբը եւ վախճանը մեր գոյութեան, դէպի Աստուած՝ որուն ի սպաս դրաւ ամբողջ իր կեանքը, անխոնջ փնտռելով եւ խոնարհաբար սիրելով ու պաշտելով: Որքան աւելի ըմբռնեց՝ այնքան աւելի սիրեց, որքան աւելի սիրեց՝ այնքան աւելի ըմբռնեց: Եւ իր իննըամեայ փորձառութիւնն ու վկայութիւնը մեզի կտակ ձգեց՝ իբրեւ անկորնչելի ու նուիրական ժառանգութիւն:

ՀԱՄԱԶԱՍՊ Սրկ. ԳԼԸՆՃԵԱՆ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

(Շաբ. տե'ս «Բազմ.» 1972, ք. 2-3, էջ 366-368)

ՈՂԲ ԺԱ.

Համբոյր ունիմ ես հաւատքի շրթներով,
Համբոյր՝ Փրկչին ոտքերուն.
Կը համբուրեմ աւետարանը խօսուն,
Համբոյր՝ սիրոյ անունով:

Ես կը խօսիմ ոչ իբրեւ մարդ հողածին,
Այլ՝ համբարձող սրբութիւն.
Աւազանէն իբրեւ ելած նորածին,
Որուն շնորհքն է մարմին:

Պէտք է ճանչնալ Աստուածութիւնն հաւատքով,
Յոյսին փարիլ անսասան.
Ու նորոգուիլ զերդ բընութիւնը դարնան,
Որ ապրի մարդը մարդով:

Առաքեալներ, մարգարէներ ինձ տուին,
Մեղքին համար թողութիւն.
Քանդակեցին, քանդակեցին սուրբ անունն
Երրորդութեան վերըստին:

Կը հոտոտէ աղօթական խունկն Աստուած,
Ծաղիկ կ'ուզէ սրբութեան.
Զղջում կ'ուզէ եւ արցունքի աւազան
Յոյսը խաչին միացած: